

յությունը, ինչպես նաև ընակշության կայուն նստակեցությունը: Անասնապահության այս ենթածեր պայմանավորված էր անասնապահական-երկրագործական համալիր տնտեսության վարմամբ:

7. XIX դ. երկրորդ կեսին - XX դ. սկզբին անասնապահության նշված ժներն ու ենթածերը գոյատևում էին Արևելյան Հայաստանի քրդերի մեջ, ընդ որում, զերակշռում էր կիսաթռչվորականի երկրորդ ենթածեր, իսկ առաջինը ամենաքիչ տարածվածն էր, որը պայմանավորված էր մի շարք գործոններով՝ քրդերի, հատկապես եղիների, երկրագործական որոշ ավանդույթներ, շրջապատի հայ երկրագործական մշակույթի որոշակի ազդեցությունը, քրդական ընակշռության մեջ սոցիալական շերտավորման ուժեղացումը, շատ ընտանիքների աղքատացումը և անցումը երկրագործական տնտեսության: Դրանց վրա որոշմ էին զրել նաև Արևելյան Հայաստանի ընական հմայական պայմանները, որոնք նվազ նպաստավոր էին անասնապահության առավել էքստենսիվ ժների կիրառման համար:

ԻՌԻՍ ԴՐԱԳԵՆԿՈ

ՄՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌՈՒՍ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ
ՍԳՐԱԲԱՅԻՆ ՀՄԱՅԻԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ /XIX Դ.
ՎԵՐՃ - XX Դ. ՍԿՀԻՃՔ/

1. Ներկա հաղորդման խնդիրն է Արևելյան Հայաստանի ոռւս գյուղացիության կենցաղում տեղ գտած ազգային հմայական արարողություններին վերաբերող փաստական նյութի օնդհանրացումն ու համակարգումը, դրանց քնորոշ գծերի և առանձնահատկությունների բացահայտումը: Այդ ծեսերը, թեև օրգանապես մտնում էին տոնացուցային ծիսական համակարգի մեջ, այնուամենայնիվ, որոշակի օրերի չեին հարմարված:

Հաղորդման միակ աղջյուր են ծառայել ՀՍԽՀ Ստեփանավանի և Կալինինոյի շրջանի՝ անցյալում ուղղափառություն դավանած ոռւսների կողմից հիմնված ընակավայրերում վերջին տարիներին հեղինակի հավաքածութային ազգագրական նյութերը:

2. Ցանքի և անասունի բարեհաջողությունն ազանվող հմայական արարողությունների ծագումն արգասիք է արտադրողական ուժերի զարգացման ցածր մակարդակի, քանզի այդ արարողությունները ուսալ-գործական կողմնորոշումների բարդ համակցությունն են: Ազգարային մոգությունը երկրագործական ավանդույթների ամրապնդման և փոխանցման

միջոցներից մեկն էր:

3. Ուսւ գյուղացիության շրջանում տարածված ազրարային հմայական գործողությունների տիպերը բազմազան էին, սակայն գերակշռում էր նմանակման սկզբունք՝ շփման հետ միախառն։ Բնորոշ գծերից մեկն էլ խոսքի /վերըալ/ մոգության բացակայությունը կամ վատ պահպանվածությունն էր։

4. Հմայական արարողությունների միջոցով ուսւ վերաբնակիչները ջանում էին առաջ թերթ ապահովել։ Հատուկ արարողություն կար, կապված սերմացու հացանատիկի հետ։ Ցանքի օրն ընտրելու հարցում գոյություն ուներ արգելվածների ավանդութային համակարգ։ Ցանքն ըստ կըսելը ևս ուղելցվում էր հատուկ ծեսով։

5. Բանջարանոցային բույսերի ցանքը կնոջ գործ էր, ուստի պատճական չէ, որ երկրագործության հատկապես այս մյուղում մոգության վերապրուկներն առավել ամբողջական են պահպանվել։ Գյուղատնտեսական նոր մշակույթների երևան գալու հետ, արդեն հայտնի մոգական արարողությունները մեխանիկորեն սկսեցին կիրառվել նաև դրանց նկատմամբ։

6. Անասնապահությանն առնչվող ծեսերը, ինչպես և Ռուսաստանի ներքին գավառների ուսւ գյուղացիության մեջ, սլավոն վերաբնակիչների շրջանում աչքի էին ընկնում բազմազանությամբ։ Հմայական գործողություններն առավել ամբողջական պահպանվել էին թուշնաբուժության մեջ։

7. Ազգարային ծիսաշարի կարգը պետք է դասել նաև կարկտի, երաշտի, հեղեղների և թերթի ու անասունների համար կործանարար տարերային այլ աղետների դեմ ուղղված արարողությունները։ Արևելյան շայաստանի ուսւ վերաբնակիչների շրջանում առավելազույնս տարածված էին անմրեաթեր արարողությունները, որոնց շարքում առանձնանում են այնպիսի համենի ծեսեր, ինչպես մեռյալով դագաղը գետն անցկացնելը, ցամաքած առվի հունը վարելը և այլն։

8. Ինարկե, մի շարք հանգամանքների բերումով, Արևելյան շայաստանի ուսւ ընակիչների ալիսնորութային ծիսակարգում էական փոփոխություններ են կատարվել։ Ծիսական արարողությունների զարգացման ուղղությունը պետք է բացահայտվի XIX դ. երկրորդ կեսին - XX դ. ըստ կըզքին ուսւների էթնիկ ընտառածքում կենցաղավարած համանման արարողությունների, երգային բանահյուսության և տերմինների ըննությամբ՝ այստեղ պահպանվածների համեմատական վերլուծության միջոցով։